ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/08

ք. Երևան «19» հունիսի 2019թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարդիան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու

փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9648000 (ինը միլիոն վեց հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով (տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր):

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե	«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք.Երևան, Մարգարյան նրբ.7, տարածք 23
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Այդի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013220026	Հ/Հ 11817000166300
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01273049
Գլխավոր	Տնօրեն Ա.Գևորգյան
քարտուղար---------Գ. Գրիգորյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ.
Կ.Տ.	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ * REAL ESTATE CADASTRE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA * 02534328

"GUARDIAN" LLC ГАРДИАН 01273049

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխ. բնութագիրը	չափման միավորը	Ընդհ. գինը/ՀՀ դրամ	Ընդհ. քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	98111121/501		դրամ	9648000	1	ք. Երևան՝ Արշակունյաց 7, Կոմիտասի 35/2, Խորենացի 8	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.12.2019 թ.

Պատվիրատուի օբյեկտը պետք է ունենա 24 ժամյա (շուրջօրյա) շաբաթվա բոլոր օրերին, ներառյալ հանգստի և տոն օրերը, և 24 ժամյա (աշխատանքային օրերին) պահպանության ծառայություն՝ պատվիրատուի կողմից տրված հրահանգներին և պահանջներին համապատասխան:

Կատարողի վերահսկողության տակ գտնվող տարածքները գտնվում են ք. Երևանում՝ Արշակունյաց 7, Կոմիտաս 35/2 և Խորենացի 28 հասցեներում:

1. Արշակունյաց 7 հասցեում գտնվող օբյեկտն ունի երկու ծառայողական մուտք՝ նախատեսված աշխատակազմի և այցելուների համար և մեկ ետնամուտք: Հսկողությունը պարտադիր է, որը պետք է իրականացվի մեկ պահնորդի առկայությամբ (շրջիկ, 24 ժամյա): Ետնամուտքի (Սևանի փողոցի կողմից) վերահսկումն իրականացվում է նաև տեսահսկման համակարգերի միջոցով:

2. Կոմիտաս 35/2 հացեում գտնվող օբյեկտն ունի երկու ծառայողական մուտք՝ աշխատակիցների և այցելուների համար: Առաջինը (Կոմիտասի պողոտայի կողմից) կահավորված է անցագրակետով և նախատեսված է աշխատակիցների համար, ինչպես նաև այցելուների համար՝ անցագրերով: Հսկողությունը պարտադիր է, որը պետք է իրականացվի մեկ պահնորդի առկայությամբ 24 ժամ:

Երկրորդ ծառայողական մուտքը նախատեսված է սպասարկման գրասենյակի աշխատակիցների և այցելուների համար, որի հսկողությունը պարտադիր է և պետք է իրականացվի մեկ պահնորդի առկայությամբ (24 ժամյա, շրջիկ): Գրասենյակի աշխատանքային ժամի ավարտից հետո երկրորդ մուտքի պահնորդը միանում է առաջին մուտքի պահնորդին: Նույն պահնորդի միջոցով պետք է վերահսկվի նաև տրանսպորտային միջոցների համար նախատեսված մուտքը՝ համաձայն նախօրոք ներկայացված ցանկի:

3. Խորենացի 28 հասցեում գտնվող օբյեկտն ունի մեկ ծառայողական մուտք աշխատակիցների և այցելուների համար: Հսկողությունը պարտադիր է, որը պետք է իրականացվի մեկ պահնորդի առկայությամբ (24 ժամյա, շրջիկ) անվտանգության ապահովման նպատակով:

Ծառայությունը պատշաճ վերահսկելու համար, ինչպես նաև Պատվիրատուի հետ անընդմեջ կապը պահպանելու և իր պահանջներին օպերատիվ արձագանքելու նպատակով, Կատարողը պետք է ունենա արագ արձագանքման խումբ, հերթապահ մաս և ահազանգման համակարգերի ընդունման կառավարման կենտրոն:

Կատարողը կազմակերպում և ապահովում է Պատվիրատուի օբյեկտի, տարածքների, ինչպես նաև պատվիրատուի կողմից կատարողի պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների պահպանությունը:

Կատարողը կրում է նյութական պատասխանատվություն գողությամբ կամ այլ հանրորեն վտանգավոր արարքով Պատվիրատուին պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարողի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում:

Անմիջապես Պատվիրատուին և ոստիկանությանը կատարողը իրազեկում է պատահարի մասին:

Ահազանգ ստանալուց հետո կատարողը ապահովում է իր համապատասխան արագ արձագանքման խմբի՝ այցը նշված օբյեկտ:

Նշված պայմանները ապահովելու նպատակով կատարողը օգտագործում է իր համապատասխան տեխնիկական միջոցները:

Ապահովում է, ըստ պատվիրատուի պահանջի, օբյեկտների անվտանգությունը, ֆիքսված պահակակետերում, պահնորդների միջոցով՝ համապատասխան նախանշված ժամանակով:

Բոլոր պահնորդները պարտավոր են կրել համապատասխան հանդերձանք պահնորդային աշխատակցի տարբերանշանով, և պետք է ունենան պահնորդային անձը հաստատող վկայական:

Կատարողը ապահովում է շուրջօրյա շրջիկ ծառայություն (վերահսկում) ավտոմեքենաներով՝ համապատասխան տեխնիկական զինվածությամբ, ինչպես նաև արագ արձագանքման խումբ՝ զինված համապատասխան տեխնիկական միջոցներով, հանդերձանքով:

Կատարողը վերահսկում է իր ծառայությունների ամբողջ ընթացքը շուրջօրյա, հերթապահ ծառայության միջոցով, հաղորդակների ընդունումը և գրանցումը, ահազանգի դեպքում արագ արձագանքման խմբի ուղղեգրումը տագնապի վայր և այլն:

Կատարողի հիմնական պարտականությունները

Տարածքի, գույքի և նյութական արժեքների պահպանում վնասներից, գողություններից, կորուստներից:

Անցագրային գործառույթների իրականացում:

Անրաժեշտության դեպքում հյուրերի և այցելուների ուղեկցում:

Անցագրերի/անցաթղթերի դուրսգրում և տրամադրում:

Այցելուների գրանցում համապատասխան գրանցամատյանում:

Ընդունող անձնակազմին տեղեկացում և զեկուցում այցելուի վերաբերյալ:

Անձը հաստատող փաստաթղթի ստուգում, տարածք մուտք գործելուց առաջ:

Այցելուների պատշաճ պահվածքի վերահսկողություն Պատվիրատուի տարածքներում գտնվելիս:

Զեկուցել անհամապատասխանությունների, խախտումների և պատահարների մասին:

Անմիջապես արձագանքում տագնապային, հրդեհային համակարգի ահազանգի ակտիվացման դեպքերում, ինչպես նաև տարածքում հակահրդեհային վերահսկման ապահովումը:

Պայթուցիկի սպառնալիքի դեպքերում գործողություններ կատարել պատվիրատուի կողմից սահմանված Արտակարգ Իրավիճակների Գործողությունների պլանին համապատասխան:

Ոչ լիազորված անձանց մուտքի արգելումը տարածք:

Լիազորված ավտոմեքենաների մուտքի/ելքի կազմակերպում և համապատասխան կայանատեղի տարածքներում ապահովելը:

Ժամանակավոր կայանելու դեպքում, անցագրերի տրամադրում, իսկ մշտական կայանելու թույլտվության անցագրերի առկայության դեպքում նրանց ստուգումը:

Գրանցամատյաններում համապատասխան գրառումների իրականացում, տարածքում անընդմեջ շրջայցերի իրականացում:

Հակահրդեհային կանոնների ապահովումը և պահպանումը:

Զեկուցել վերադասին, Պատվիրատուի համապատասխան անձնակազմին և ընկերության Վերահսկողական Կենտրոնին բոլոր տեսակի ակնհայտ և կասկածելի գործողությունների և առարկաների վերաբերյալ տարածքում կամ նրա մոտակայքում:

Այն այցելուները, որոնք կխախտեն համապատասխան անվտանգության կանոնները, դուրս կհրավիրվեն սրահից:
Պոտենցիալ ռիսկերի գոտիների այցելություն և ստուգում:
Հրդեհավտանգ տարածքների վերահսկումը և ստուգում:
Ընդհանուր անվտանգության վերահսկում, աշխատանքի անվտանգության և կենսագործունեության կանոնների պահպանում այցելուների, հյուրերի և աշխատակիցների կողմից:
Արտակարգ իրավիճակներում տարահանման կազմակերպում:
Հետևել չծխելու քաղաքականության կանոններին:
Տարածքի արգելված ծառայողական գոտու սահմաններից ներս թույլ չտալ որևէ ոչ լիազորված անձի ներթափանցումը, իսկ ներխուժման փորձերը կտրուկ կանխարգելել:
Շրջայցների իրականացում շենքի ներսում և արտաքին պարագծով, որոշակի ժամակահատվածում, ինչպես նախատեսված է Ծառայության հրահանգների ցանկում:
Կատարողի այլ պարտականությունները
Արձագանքում պատվիրատուի բոլոր տեսակի ի հայտ եկած պահանջներին, պայմանագրի իրականացման հետ կապված խնդիրների շրջանակում
Վերահսկողական ստուգման այցելություններ՝ ծառայության վայրեր.
Հենակետերում պահնորդների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարման վերահսկողություն
Օժանդակել և աջակցել հենակետերում գտնվող պահնորդների արտակարգ իրավիճակներում, պատահարների, միջադեպերի և կոնֆլիկտների ժամանակ
Այլ պարտականություններ, տրված Պատվիրատուի կողմից և հաստատված երկկողմանի Պահնորդային ծառայության հրահանգացանկով՝
Պահպանությանը իրականացնում և պահպանում են բոլոր անհրաժեշտ գրառումները և գրանցումները իրենց կողմից մուտք արած փաստաթղթերում և գրանցամատյաններում:
Պահնորդները պատասխանատու են ամբողջ մուտքի վերահսկման գործընթացի և ստուգման կարգի համար, պետք է հետևեն, որ իրենց գործողությունները համապատասխանեն պատվիրատուի կողմից սահմանված կարգին, կապված այցելուների անձը հաստատող փաստաթղթերի ստուգման, անցագրերի դուրս գրման և տեղեկացնելու հետ այցելուի ժամանման վերաբերյալ: Մուտքը պետք է արգելվի ցանկացած այցելուի համար, ով տարածք կմտնի հրազենով կամ կյանքի համար վտանգավոր առարկայով: Նման թույլտվություն կարող է տալ միայն պատվիրատուի համապատասխան աշխատակիցը:
Պահնորդները չպետք է լքեն իրենց հենակետը մինչև համապատասխանորեն չհանձնեն հերթափոխը: Այն դեպքում, եթե անհրաժեշտ է անհապաղ փոխարինություն, նրանք պետք է հաղորդեն Վերահսկող Կենտրոնի հերթապահ պատասխանատու հերթապահին, որը պետք է ապահովի հերթափոխի փոխարինումը նոր պահնորդով:
Բոլոր պահնորդները պետք է լինեն իրազեկված պայթյունի վտանգի կամ սպառնալիքի ահազանգի դեպքում գործելու ընթացակարգին, համապատասխան Պատվիրատուի Արտակարգ Իրավիճակների Պլանին: Տարահանման ծրագիրը պետք է քննարկվի պատվիրատուի հետ և կհրահանգվի Պահնորդներին: Տարահանման վարժանքները և արձագանք պայթունի առկայության դեպքում պարբերաբար պետք է իրականացվի պատվիրատուի հետ սեղմ համագործակցության և թույլտվության պայմաններում:
Պահնորդները ուղղակիորեն պատասխանատու են, բոլոր իրենց տրամադրված և հանձնված սարքավորումների համար պատկանող Պատվիրատուին կամ կատարողին:
Այն դեպքում, եթե նկատվի կամ հայտնաբերվի կասկածելի գործողություններ կամ փորձ ուղղված հավաքելու տեղեկատվություն Պատվիրատուի կամ նրա աշխատակցի մասին կամ նրան ներկայացնող կազմակերպությունների, ապա Պահնորդները անմիջապես պետք է զեկուցեն պատվիրատուին:

Պահնորդը պատավորվում է ներկայանալ ծառայության վայր սթափ վիճակում:
Միջադեպի դեպքում Պահնորդը պարտավոր է անմիջապես տեղյակ պահել պատվիրատուին և կազմել համապատասխան արձանագրություն:
Պահնորդին արգելվում է տեղեկություններ տրամադրել Պատվիրատուի աշխատակիցների մասին, բացառությամբ տվյալ աշխատակցի տեղում լինելու վերաբերյալ:
Գույքի դուրս բերումը տարածքներից պետք է իրականացվի Պատվիրատուի պատշաճ ընթացակարգին համաձայն՝ հիմք ընդունելով պատվիրատուի կողմից ստորագրված անցագրերը:
Շրջիկ պարեկային և այցելությունների ծառայություն
Անընդմեջ տեսչական ստուգումները ապահովելու համար կատարողի շրջիկ պարեկային տեսուչները պետք է իրականացնեն ամենօրյա այցելություններ՝ կատարողին պայմանագրերով հանձնված ծառայության վայրերը գիշերվա ժամերին:
Շրջիկ ծառայությունը պարտավոր է արագ արձագանքել Պահպանվող օբյեկտից ստացած ահազանգին:
Պահնորդը պարտավոր է նաև կապ հաստատել իր անմիջական պատասխանատուի հետ և տեղեկացնել իրավճակի մասին և իր կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ:
Եթե տեղի է ունեցել կեղծ տագնապ, ապա Պահնորդը պարտավոր է զեկուցել Վերահսկողության Կենտրոնին և գրանցում կատարել համապատասխան գրանցամատյանում:
Շրջայցերի իրականացում անվտանգության անձնակազմի կողմից
Պահակետի Պահնորդները պարտադիր պետք է իրականացնեն շրջայցեր համաձայն ժամանակացույցի և ինտերվալների:
Գաղտնիության ապահովման երաշխավորումը
Կատարողը պետք է պահպանի պայմանագրից բխող բոլոր տեղեկատվությունները, կոնֆիդենցիալության սկզբունքը և գաղտնիության քաղաքականությունը:
Կատարողը պետք է ունենա մասնավոր պահնորդական ծառայություն իրականացնելու լիցենզիա, ծառայողական զենք պահելու և օգտագործելու թույլտվություն:
** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900013220026 ՀՎՀՀ 02534328	«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ ք.Երևան, Մարգարյան նրբ.7, տարածք 23 «Այդի Բանկ» ՓԲԸ Հ/Հ 11817000166300 ՀՎՀՀ 01273049
Գլխավոր քարտուղար----------Գ. Գրիգորյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն----------Ա.Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ

Թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/08 պահնորդական ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան

01 օգոստոսի 2019թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Գարդիան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2019 թվականի հունիսի 19-ին կնքված պահնորդական ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/08 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ պահնորդական ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, սակայն ոչ ուշ, քան 2019 թ. -ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**ԿԱՏԱՐՈՂ**
Կադաստրի կոմիտե	«Գարդիան» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Մարգարյան նրբ. 7, տարածք 23
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013220026	Հ/Հ 11817000166300
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01273049

Գլխավոր քարտուղար ---------- Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

տնօրեն ---------- Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

19.06.2019թ. կնքված թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/08 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(Պահնորդական ծառայություններ)

ՀՀ դրամ

հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջ անցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111121/501	Պահնորդական ծառայություններ	1929600	3859200	5788800	7718400	9648000	9648000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար _____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարդիան» ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան նրբ. 7, տարածք 23
«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817000166300
ՀՎՀՀ 01273049

տնօրեն _____ Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.